ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ 12 մայիսի 2022թ. ժամը 15:00 **ք. Սպիտակ**

Նիստին ներկա էին համայնքի ավագանու 27 անդամներից 14-ը՝ Քաջայր Նիկողոսյանը, Լուսինե Ավետիսյանը, Արտակ Մաթոսյանը, Հայկ Սիսակյանը, Ալվարդ Համբարյանը, Կարեն Հայրապետյանը, Ռաֆայել Սիմոնյանը, Աննա Աջամյանը, Սամվել Սիմոնյանը, Կարեն Սարգսյանը, Նունե Էհտիբարյանը, Զալիկո Համբարյանը, Կարինե Դիլաքյանը, Վարդուհի Թումանյանը:

Նիստից բացակայում էին համայնքի ավագանու 13 անդամներ՝ Համլետ Մազմանյանը, Մարտին Հաջյանը, Գագիկ Յայլոյանը, Արամայիս Փիլոյանը, Գագիկ Սահակյանը, Թամարա Լամբարյանը, Սարիբեկ Ամիրյանը, Նարինե Հակոբյանը, Գուրգեն Փիլոյանը, Արկադի Ասատրյանը, Մանուշ Աթյանը,Վահե Ղազարյանը, Սասուն Ասատրյանը, /պատճառները նշված են համայնքի ավագանու անդամների գրանցման թերթիկում/:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման եվ հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վարուժան Ապրեսյանը, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գայանե Չոբանյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը:

Նիստն արձանագրում էր Ազգանուշ Ֆրանգյանը:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը ներկայացրեց Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 12-ի նիստի օրակարգի նախագիծը:

Օրակարգի 7-րդ հարցի հետ կապված աշխատակազմի քարտուղար Ա. Ֆրանգյանը ներկայացրեց, որ Սպիտակի համայնքապետարան է դիմել «Մայ Ֆորեստ ԷՅ ԷՄ» բնապահպանական ՀԿ-ն՝ Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրի 06-095-0273-0058 կադաստրային ծածկագրով համայնքապատկան հողակտորը անտառատնկման աշխատանքներն իրականացնելու նպատակով 25 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով, «Մայ Ֆորեստ ԷՅ ԷՄ» բնապահպանական ՀԿ-ին տրամադրելու համար: Օրակարգի նախագծում նշված հողամասը ընդգրկվել է 10 տարի ժամկետով, վարձակալությամբ տրամադրելու համար: Հայտնեց, որ լրացուցիչ ուսումնասիրությունների կարիք է առաջացել, ուստի հարցը հնարավոր չէ քննարկել և նպատակահարմար է հարցի քննարկումը հետաձգել: Համայնքի ղեկավարը առաջարկեց օրակարգի 7-րդ հարցը օրակարգից հանել: Առաջարկությունը դրվեց քվեարկության: Նիստին ներկա ավագանու բոլոր անդամները միաձայն կողմ քվեարկեցին, հարցը օրակարգից հանվեց:

Օրակարգի մնացած հարցերի վերաբերյալ առարկություններ, առաջարկություններ չեղան:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 12-ի հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1) Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի թիվ 4-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(Զեկուցող՝ Վ. Ապրեսյան)

2) «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման

գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը գույք ամրացնելու և Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 28-ի թիվ 14-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

(Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան)

3)«ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջը վարձակալության իրավունքով անշարժ գույք տրամադրելուն համաձայնություն տալու մասին

(Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան)

4) Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու մասին

(Զեկուցող՝ Գ. Չոբանյան)

5) Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

(Զեկուցող՝ Գ. Չոբանյան)

6) Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

(Զեկուցող՝ Գ. Չոբանյան)

Օրակարգը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

1. ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ԹԻՎ 4-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Վ" ԱՊՐԵՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի, 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի «Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 4-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

2.ԼՍԵՑԻՆ«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով և 9-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող ԳԱԶ մակնիշի (հաշվառման համարանիշը՝ 495CG61, տիպարը՝ KO-503B(GAZ-53-12), նույնականացման համարը XTH53120OL1278551, թափքի տեսակը՝ ցիստեռն) տրանսպորտային միջոցը անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի

փետրվարի 28-ի «Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցը վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 14-Ա որոշումը:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

3. ԼՍԵՑԻՆ ««ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով

«ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող, ք. Սպիտակ, Շահումյան փողոց 7 հասցեում գտնվող 06-006-0503-0084-001 կադաստրային ծածկագրով վարչական շենքի 1-ին հարկում մեկ քառակուսի մետր մակերեսով տարածք տերմինալ տեղադրելու նպատակով մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ վարձակալության իրավունքով «ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջը տրամադրելուն՝ համաձայն հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի վարձավճարի չափը սահմանել 10 000 Հայաստանի Հանրապետության դրամ:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

4. ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՄԵՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 17-ի թիվ 149 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2021թվականի հունիսի 22-ի թիվ 01/111. 5/05131-2021 գրությունը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-098-0043-0003 կադաստրային ծածկագրով 1,9936 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրակա նշանակության օբյեկտների հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:

2. Սպիտակ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել համապատասխան փոփոխություն:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

5. ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ

հոդվածի 2-րդ կետով, 76-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12042022-06-0053 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0560-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 2,10782 հեկտար մակերեսով 4-րդ կարգի արոտավայր հողատեսքի հողամասը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:

2. Հողամասի մեկնարկային վարձավճար սահմանել հողամասի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 15%-ի չափով՝ 3 383 ՀՀ դրամ, վարձակալության տրամադրման ժամկետը՝ 25 տարի:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

6. ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22012020-06-0037 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

3. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Ջրաշեն, 1-ին փողոց, թիվ 39/1» հասցեում գտնվող 06-095-0071-0014 կադաստրային ծածկագրով 0,01599 հեկտար մակերեսով բնակավայրերի

նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասը, հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

4. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ 126 640, 80 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 792 ՀՀ դրամ):

5. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի չափագրման և պետական գրանցման ծախսերը:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (13) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (1)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՆՆԱ ԱՋԱՄՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ԴԻԼԱՔՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԽՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ